Ամսիս 24-ին, շատ կարճատև հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ ճիշտ իւր տօնի առաւօտուն (Սրբոցն Յովակիմայ և Աննայի) Միաբանութեանս յարգուած և սիրուած անդամներից մինը՝ Հայր Յովակիմ վարդապետ Ղամեքեանը։ Ծնուած էր Վաղարշապատում 1842 թ. մանկութիւնից մտած էր Էջմիածնի ժառանգաւորաց դրպրոցը, սկզբանէ անտի յայտնի լինելով իւր գեղեցիկ և դուրեկան ձայնով և երգեցողութեամբ։ Երկար տարիներ վարած էր ուսուցչական պաշտօն (Տաթև, Սևան, Վաղարշապատ)։ Իւր հեզահամբոյր և պարզախօս բնաւորութեան համար սիրուած էր ամենքից։ Վերջին կաթուղիկոսական ընտրութեանց ժամանակ իբրև աւագ անդամ Միաբանութեանս պատգամաւոր էր։

Տէր լուսաւորեսցէ զհոգի ննջեցելոյն և հանգուցցէ ի լոյս երեսաց իւրոց։